ՀՀ ՕՐԵՆՔԸ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Տեսչական մարմինը

1. Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է:

2. Տեսչական մարմինն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Տեսչական մարմինը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանումներ: Տեսչական մարմնի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

5. Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:

Deleted: 4. Տեսչական մարմնի լիազորությունների արդյունավետ իրականացման, նյութական խրախուսման, կարողությունների զարգացման նպատակով տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է բացել արտաբյուջետային միջոցների հաշիվ, որը չի կարող համալրվել տեսչական մարմնի վերահսկողության արդյունքում նշանակված տույժերով և (կամ) տուգանքներով:¶